



California's protection & advocacy system

# ԻՀՏՏ ծառայությունն մատուցողների սպասելաժամանակը և երթևեկելու ժամանակը

*Փոփոխվել է` Հունիս 2018թ., Հրապ. #5607.10 -Armenian*

## 1. Արդյո՞ք ես կարող եմ ստանալ ԻՀՏՏ-ի ժամեր իմ ծառայությունն մատուցողի համար` ինձ բժշկի տանելու նպատակով:

Այո, դա կոչվում է «բժշկական այցելությունների ուղեկցում»:  
«Բժշկական այցելություններին» ուղեկցելը (օր.՝ ուղեկցում բժշկի կլինիկա, ատամնաբուժական կլինիկա և այլ բուժհաստատություններ) հանդիսանում է ԻՀՏՏ ծառայություն, որը կարող է տրամադրվել որոշակի ԻՀՏՏ շահառուների: Բժշկական այցելությունների ուղեկցումը կարող է թույլատրվել այն դեպքում, երբ շահառուին անհրաժեշտ է մեկ այլ ԻՀՏՏ ծառայություն, որպեսզի նա այցելի բժշկին կամ այլընտրանքային ռեսուրսին և հետ վերադառնա և/կամ հասնի այցելության վայրը: <sup>1</sup> Օրինակ եթե շահառուին թույլատրվել է բժշկական այցելությունների ուղեկցողի ծառայությունը, ապա ծառայությունն մատուցողին կարող է տրամադրվել վճար` ԻՀՏՏ շահառուին բժշկական հաստատություններ գնալիս և հետ վերադառնալիս օգնելու համար:

Երթևեկելու ընթացքում օգնության օրինակներ են` օգնել շահառուին նստել ավտոմեքենա և իջնել ավտոմեքենայից, հարմար տեղավորվել ավտոմեքենայում և կապել ամրագոտիները: Բժշկական այցելությունների ուղեկցողի ծառայության թույլտվություն ստանալու համար դուք ԻՀՏՏ-ի սոցիալական աշխատողին պետք է ասեք, որ ձեզ համար նշանակված է բժշկի այցելություն, և որ ձեզ անհրաժեշտ է ձեր ԻՀՏՏ սպասարկողի օգնությունը այդ այցելությանը գնալու համար: ԻՀՏՏ -ի սոցիալական աշխատողն այնուհետև գնահատում է բժշկական այցելությունների գնալու և հետ վերադառնալու ձեզ անհրաժեշտ

օգնության կարիքը: <sup>ii</sup> IHSS ծառայությունն մատուցողները պարտավոր չեն օգտագործել իրենց սեփական ավտոմեքենան՝ շահառուներին բժշկական այցելությունների տանելու և բերելու համար: Ինչևէ, IHSS շահառուն կարող է վճարել իր ծառայությունն մատուցողին, որպեսզի վերջինս իր ավտոմեքենայով շահառուին տանի նրա բժշկական այցելություններին և հետ բերի:

**2. Կարո՞ղ է IHSS ծառայությունն մատուցողը վճարվել IHSS շահառուին բժշկի այցելության ժամանակ ծախսած սպասելաժամանակի համար:**

Այո: Սկսած 2016թ. փետրվարի 1-ից՝ ծառայությունն մատուցողները կարող են վճարվել բժշկական այցելությունների ընթացքում ծախսած սպասելաժամանակի համար: Բժշկական այցելությունների ընթացքում ծախսած սպասելաժամանակի դիմաց վճարվելու համար ծառայությունն մատուցողը պետք է ցույց տա, որ բժշկի այցելության ժամանակ ինքը չի կարող թողնել գնալ, քանի որ չի կարող կանխատեսել, թե որքան կտևի շահառուի այցելությունը: Որպես օրինակ կարող է լինել այն դեպքը, երբ ծառայությունն մատուցողը շահառուին տանում է բժշկի այցելությանը և պետք է սպասի կլինիկայում, քանի որ ցանկացած պահի կարող է պահանջվել շահառուին տուն տանել: Դա նշանակում է՝ ծառայությունն մատուցողը «պետք է սպասի» կամ «Սպասելաժամանակ՝ աշխատանքային պարտականությունները կատարելիս»:

Եթե շահառուին թույլատրվել է բժշկական այցելություններին ուղեկցելու ծառայություն և եթե բավարարված են բոլոր հետևյալ պայմանները, ապա ծառայությունն մատուցողի համար կհաշվվի «սպասելաժամանակ աշխատանքային ժամերից դուրս» (ինչը նշանակում է, որ նա չի վճարվի շահառուին սպասելու վրա ծախսած ժամանակի համար)։

1. Այցելության համար պահանջվող ժամանակը հայտնի է նախապես, ինչը ծառայությունն մատուցողին թույլ կտա հասկանալ, որ այդ ժամանակի ընթացքում շահառուին ծառայություններ մատուցելու անհրաժեշտություն չի լինի, և որ այդ ժամանակը նա կարող է օգտագործել իր սեփական կարիքների համար,

## Էջ 3՝ 7-ից

2. Այցելությունը նշանակված է այնպես, որ այն կունենա բավարար տևողություն, որի ընթացքում ծառայություն մատուցողը կարող է զբաղվել անձնական գործերով, և
3. Ծառայություն մատուցողից չի պահանջվում սպասելաժամանակի ընթացքում մատուցել որևէ այլ թույլատրված ծառայություն, օրինակ գնել սնունդ, կատարել այլ գնումներ:

Եթե վերոնշյալ բոլոր պայմանները բավարարված են, ապա շահառուն պետք է ծառայություն մատուցողին հայտնի, որ նրա աշխատանքի կարիքը չկա մինչև այն կոնկրետ ժամը, երբ ծառայություն մատուցողը պետք է վերադառնա, որպեսզի շահառուին ուղեկցի տուն: Այս ժամանակահատվածի համար ծառայություն մատուցողը չի վճարվելու: Եթե վերոնշյալ բոլոր պայմանները բավարարված ՉԵՆ, ապա ծառայություն մատուցողի համար կհաշվվի «սպասելաժամանակ աշխատանքային պարտականությունները կատարելիս», և նա պետք է վճարվի շահառուին սպասելու վրա ծախսած ժամանակի համար:

Սպասելաժամանակի մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել All County Letter No. 16-01-ում: <sup>iii</sup>

### **3. Ի՞նչպես է կարգը, եթե ինձ անհրաժեշտ է, որ ծառայություն մատուցողն ինձ հետ գա այլընտրանքային ռեսուրսի մոտ: Արդյո՞ք նա այդ դեպքում նույնպես կվճարվի սպասելաժամանակի համար:**

Անհատներին կարող է տրամադրվել փոխադրման ծառայություն դեպ այն վայրը, որտեղ այլընտրանքային ռեսուրսները շահառուին տրամադրում են տնային օժանդակող ծառայություններ IHSS-ի փոխարեն: <sup>iv</sup> Ընդհանուր առմամբ, այն անհատների դեպքում, ում տրամադրվում է ժամանակ այլընտրանքային ռեսուրսին այցելելու ընթացքում բժշկական ուղեկցության համար, IHSS-ի ծառայություն մատուցողի սպասած ժամանակը չի վճարվի, քանի որ շահառուներին սովորաբար իջեցնում են և հետո վերցնում որևէ կոնկրետ ժամի: Սովորաբար ծառայություն մատուցողը չի կարող վճարվել այլընտրանքային ռեսուրսին այցելելու ուղեկցության ընթացքում ծախսած սպասելաժամանակի համար, քանի որ ծառայություն մատուցողն այդ ժամանակը կարող է արդյունավետորեն օգտագործել իր

## Էջ 4` 7-ից

սեփական կարիքների համար, և դա համարվում է սպասելաժամանակ աշխատանքային ժամից դուրս: <sup>v</sup> Ինչևէ, որպեսզի հնարավոր լինի որոշել, թե արդյոք սպասելաժամանակը վճարվում է, թե ոչ, սոցիալական աշխատողը պետք է սահմանի, թե արդյոք ծառայությունն մատուցողն օգտագործել է որպես «սպասելաժամանակ աշխատանքային պարտականությունները կատարելիս», թե «սպասելաժամանակ աշխատանքային ժամից դուրս»: <sup>vi</sup>

### **4. Արդյո՞ք անչափահասը կարող է ստանալ IHSS ժամեր բժշկին այցելելու ընթացքում ուղեկցության համար:**

Անչափահաս շահառուների համար բժշկական այցելությունների ուղեկցության թույլտվություն ստանալու համար գործում են հատուկ պահանջներ: Անչափահասների համար բժշկական այցելությունների ուղեկցման ծառայությունը կարող է թույլատրվել միայն այն դեպքում, եթե անչափահաս շահառուն ունի «գնահատված արտակարգ կարիք», այցելությունը նշանակված է որևէ մասնագետի մոտ, և անչափահաս շահառուն ունի այցելությանը գնալու կամ հետ դառնալու ճանապարհին որևէ թույլատրված IHSS-ի առաջադրանք կատարելու կարիք:

Անչափահաս շահառուի համար բժշկական ուղեկցման ծառայություն և դրա հետ կապված սպասելաժամանակ ստանալու համար պետք է բավարարվեն հետևյալ երեք պայմանները.

1. Անչափահաս շահառուն պետք է ունենա գնահատված արտակարգ կարիք: Արտակարգ կարիք է համարվում այն կարիքը, որը հիմնված է անչափահասի հաշմանդամության պատճառով առաջացած ֆունկցիոնալ տկարության վրա և որը չի համապատասխանում այն վիճակին, որը սովորաբար ակնկալվում է միևնույն տարիքի առանց ֆունկցիոնալ տկարության անչափահասի մոտ:
2. Այցելություն(ներ)ը պետք է նշանակվեն որևէ հատուկ ուղղվածության բժշկի կամ այլ լիցենզավորված բժիշկ-մասնագետի մոտ, և այցելությունը պետք է առնչվի անչափահասի հաշմանդամությանը կամ ֆունկցիոնալ տկարությանը: Բժշկական ուղեկցումը չի կարող թույլատրվել անչափահաս շահառուի մանկաբույժի կամ առաջնային բուժող բժշկի մոտ նշանակված սովորական

## Էջ 5` 7-ից

այցելությունների համար, օրինակ նորածինների/փոքրիկ երեխաների այցելությունները, տարեկան հետազոտությունները, իմունային պատվաստումները, սովորական մանկական հիվանդությունների/վնասվածքների հետ կապված այցեր և այլն:

3. Անչափահաս շահառուն պետք է ունենա թույլատրված IHSS առաջադրանք(ներ)ի կարիք նշանակված այցելությանը մեկելու և/կամ հետ վերադառնալու ճանապարհին կամ այցելության ընթացքում:

Չափահաս շահառուների համար թույլատրված սպասելաժամանակի կանոնները չեն գործում անչափահաս շահառուների դեպքերի համար: Դա այն պատճառով է, որ սովորաբար ակնկալվում է, որ ծնողը պետք է ներկա գտնվի երեխայի բժշկական այցելությանը, որպեսզի նա կարողանա մասնակցել երեխայի առողջությանը վերաբերող քննարկմանը բժշկի հետ և կայացնի որոշումներ բուժման ու խնամքի վերաբերյալ: Սոցիալական աշխատողը պետք է ներառի սպասելաժամանակը թույլատրված ժամաքանակի մեջ: Մանրամասն տեղեկատվություն և օրինակները կարող եք գտնել All County Letter No. 17-42-ում:

### **5. Արդյո՞ք կարող է IHSS ծառայություն մատուցողը վճարվել տարբեր շահառուների մոտ մեկնելու միջև ընկած ժամանակի համար:**

Այո: IHSS ծառայություն մատուցողները կարող են վճարվել երթևեկելու ժամանակի համար: Երթևեկելու ժամանակը այն ժամանակն է, որը ծառայություն մատուցողը ծախսում է անմիջապես շահառուի խնամքի վայրից մեկ այլ վայր երթևեկելու համար, որպեսզի մեկ այլ շահառուի մատուցի ծառայություններ նույն օրը: Սակայն ծառայություն մատուցողը չի կարող վճարվել իր տնից որևէ IHSS շահառուի գտնվելու վայրը երթևեկելու ժամանակի համար: Բացի այդ, ծառայություն մատուցողները երթևեկելու ժամանակի համար կարող են վճարվել միայն շաբաթական 7 ժամվա չափով: [vii](#)

Ծառայություն մատուցողները, ովքեր սպասարկում են մի քանի շահառուների, պետք է կապվեն վարչաշրջանի հետ, որպեսզի լրացնեն SOC 2255 ձևը և այն ուղարկեն IHSS-ի գրասենյակին: Այս ձևը պետք է

Էջ 6` 7-ից

լրացվի, որպեսզի ծառայություն մատուցողը վճարվի իր երթևեկելու ժամանակի համար:

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

*Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ. [սեղմել այստեղ Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպության կայքէջի Փաստաթղթեր բաժնում «Ֆինանսավորման դրամաշնորհներ և պայմանագրեր» էջը բացելու համար:](#)*

---

<sup>i</sup> Տե՛ս Սոցիալական ապահովության մասին օրենքի § 12300(b) և Քաղաքականությունների ու ընթացակարգերի ձեռնարկի (MPP) բաժին 30-780.1(b)(5)(A)-(B)).- [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

<sup>ii</sup> Տե՛ս MPP ձեռնարկի բաժին 30-757.15.- [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

<sup>iii</sup> All County Letter No. 16-01 առ 7-ը հունվարի 2016թ., առցանց կարելի է ներբեռնել [PDF տարբերակը հետևյալ հղումով.](#)- [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

<sup>iv</sup> MPP ձեռնարկի բաժին 30-757.154.- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

<sup>v</sup> Տե՛ս All County Letter No. 17-42 առ 23-ը հունիսի 2017թ., առցանց կարելի է ներբեռնել [հետևյալ հղումով](#), տե՛ս նաև All County Letter No. 14-82 առ 25-ը նոյեմբերի 2017թ. առցանց կարելի է ներբեռնել [PDF տարբերակը հետևյալ հղումով](#).- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

<sup>vi</sup> Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս ACL No. 17-42, առցանց կարելի է ներբեռնել [հետևյալ հղումով](#), և ACL No. 14-82, առցանց կարելի է ներբեռնել [PDF տարբերակը հետևյալ հղումով](#).- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

<sup>vii</sup> Երթևեկելու ժամանակի մասին տեղեկատվությունն այստեղ է. [Երթևեկելու ժամանակի վերաբերյալ փաստաթղթի PDF տարբերակի հղումը Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչության Տնային օժանդակող ծառայությունների մատակարարների կայքէջում](#):- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))